ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի

գիտական խորհրդի նիստում

Գիտական խորհրդի նախագահ՝ Ս. ԱՌԱՔԵԼՅԱՆ

# ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

# ԵՊՀ ԻՄ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՏԱՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՐԾԻՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ

## *1. Ընդհանուր դրույթներ*

1.1. ԵՊՀ ԻՄ շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության հարցման (այսուհետև՝ հարցման) կանոնակարգը սահմանում է ԵՊՀ ԻՄ արտաքին շահակիցների շրջանում անցկացվող հարցման անցկացման, արդյունքների մշակման և օգտագործման կարգը:

1.2. Հարցումն անց է կացվում «Կրթության մասին» ՀՀ օրենքի, ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրության, ԵՊՀ Որակի ապահովման հայեցակարգի, ԵՊՀ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման կարգի և ՌԾ-ի պահանջներին համապատասխան և համարվում է արտաքին շահակիցների կողմից ուսուցման որակն ապահովող գործառույթներին մասնակցելու և ՄԿԾ արդյունավետությունը գնահատելու իրավունքի դրսևորում:

1.3. Հարցումը կրթական ծրագրերի որակի ապահովման կարևորագույն բաղադրիչ է, որի անցկացման նպատակն է ստանալ տեղեկատվություն մասնաճյուղի շրջանավարտների մասնագիտական և անձնային կոմպետենցիաների, ընդհանրական կարողությունների, դասավանդվող մասնագիտությունների պահանջվածության և նոր մասնագիտությունների առաջարկությունների, աշխատաշուկայում մասնաճյուղի շրջանավարտների մրցունակության վերաբերյալ:

*2. Հարցման անցկացումը*

2.1. Հարցումն անց է կացվում է տարածաշրջանի գործատու կազմակերպությունների (տեղական ինքնակառավարման մարմինների, ուսումնական հաստատությունների, տարբեր հասարակական կազմակերպությունների, տնտեսվարող սուբյեկտների) շրջանում:

2.2. Հարցումն իրականացվում է յուրաքանչյուր տարվա փետրվար-մայիս ամիսներին:

2.3. Հարցումն անցկացվում է մասնաճյուղի շրջանավարտների և կարիերայի կենտրոնի կողմից:

2.4. Հարցումն անցկացվում է սույն կանոնակարգին կից ներկայացված գնահատման հարցաթերթով (տե՛ս հավելված 1):

2.5. Հարցումն անանուն է և անց է կացվում թղթային եղանակով:

*3. Հարցման արդյունքների մշակումը և պահպանումը*

3.1. Հարցման արդյունքները մշակվում, վերլուծվում և պահպանվում են շրջանավարտների և կարիերայի կենտրոնում:

3.2. Հարցման արդյունքները ներկայացվում են յուրաքանչյուր հարցապնդման պատասխանի համար հաշվարկված գնահատականների միջին թվաբանականով, միջին քառակուսային շեղումով[1] և ստացած յուրաքանչյուր գնահատականի քանակով:

3.3. Հարցաթերթերն ունեն կարծիքների և առաջարկությունների բաժիններ, որոնց արդյունքները մշակվում և ներկայացվում են ուսումնառության բարելավմանը միտված ընդհանրացված առաջարկությունների տեսքով:

3.4. Հարցման արդյունքների մշակումն ու վերլուծությունը կատարվում է մեկամյա ժամկետում:

3.3. Հարցաթերթում գնահատականների ուղղումները չեն հաշվարկվում:

---

[1] Միջին քառակուսային շեղումը ցույց է տալիս գնահատումների շեղման չափը միջին թվաբանականից: Որքան մեծ է միջին քառակուսային շեղումը, այնքան հարցման մասնակիցների անհատական գնահատումներն ավելի լայն տիրույթում են ցրված:

3.4. Գնահատման հարցաթերթերը և վերլուծությունները պահվում են 5 տարի:

*4. Հարցման արդյունքների օգտագործումը*

4.1. Հարցման վերլուծությունները շրջանավարտների և կարիերայի կենտրոնի ղեկավարը քննարկում է /ներկայացնում է/ որակի կառավարման հանձնաժողովի, ուսումնամեթոդական վարչության, մասնագիտական կրթության որակի ապահովման (ՄԿՈԱ) բաժնի հետ:

4.2.ՈՒՄՎ-ն հարցման արդյունքների վերլուծությունների հիման վրա ֆակուլտետների դեկանների, ամբիոնների վարիչների հետ քննարկում և մշակում է ուսումնառության գործընթացի և կրթական վերջնարդյունքների ձևավորման ուղղված առաջարկությունների փաթեթ:

4.3. Ֆակուլտետների դեկանները մեկամսյա ժամկետում առաջարկությունների փաթեթի հիման վրա մշակում են ֆակուլտետում բարելավման գործողություններ ու միջոցառումներ և ներկայացնում ֆակուլտետի ԳԽ-ի հաստատմանը, որտեղ նշվում են դրանց իրականցման ժամկետները և պատասխանատուները:

4.4. Հարցման արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է Մասնաճյուղի պաշտոնական կայք էջում:

*5. Կարգի հաստատումը և նրանում փոփոխությունների իրականացումը*

5.1. Սույն կանոնակարգը հաաստատում է մասնաճյուղի գիտական խորհուրդը:

5.2. Կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել մասնաճյուղի.

5.2.1. տնօրենի,

5.2.2. գիտական խորհրդի անդամների

5.2.2. որակի կառավարման հանձնաժողովի առաջարկությամբ՝ գիտական խորհրդի որոշմամբ:

Հավելված 1.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի շրջանավարտների վերաբերյալ
արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության

# Հ Ա Ր Ց Ա Թ Ե Ր Թ

Հարգելի՛ շահակիցներ, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը կարևորում է ձեր կարծիքը և վստահեցնում, որ ձեր անկեղծ ու օբյեկտիվ պատասխանները կօգնեն բարելավելու մասնաճյուղի գործունեությունը:

Հետազոտությունն անանուն է, և ստացված տվյալները կօգտագործվեն միայն ընդհանրացված տեսքով:

Խնդրում ենք լրացնել հարցաթերթը և գնահատել 5 միավորանոց սանդղակով, որտեղ 5-ը ամենաբարձր, իսկ 1-ը ամենացածր գնահատականն է:

| *Թիվ* | *Գնահատեք մեր շրջանավարտների.* | *Գնահա-տականը* |
|---|---|---|
| 1. | մասնագիտական պատրաստվածությունը | |
| 2. | տեսական գիտելիքների իմացությունը | |
| 3. | գործնական հմտությունները | |
| 4. | հաղորդակցվելու կարողությունները | |
| 5. | կազմակերպչական կարողությունները | |
| 6. | ստեղծագործական մոտեցումները մասնագիտական գործընթացում | |
| 7. | քննադատական - վերլուծական կարողությունները | |
| 8. | տարբեր իրավիճակներում արագ և ճիշտ կողմնորոշվելու կարողությունները | |
| 9. | խնդրահարույց հարցեր առաջադրելու և դրանց լուծման արդյունավետ ուղիներ փնտրելու կարողությունները | |
| 10. | մասնագիտական խոսքը | |
| 11. | վարվեցողության կանոններին և էթիկայի նորմերին հետևելը | |
| 12. | աշխատանքային պատասխանատվությունը | |
| 13. | թիմային աշխատանք կատարելու ունակությունները | |
| 14. | գործընկերներին գնահատելու և նրանց օգտակար լինելու կարողությունները | |
| 15. | ինքնազարգացման ձգտումը | |
| | | |
| 16. | Գնահատեք ԵՊՀ ԻՄ-ի հեղինակությունը. | Ձեր կազմակերպությունում<br>տարածաշրջանում |
| 17. | Խորհուրդ կտա՞ք Ձեր մերձավորներին և ընկերներին դիմել ԵՊՀ ԻՄ /այո կամ ոչ/: | |

| | |
|---|---|
| 18. | Ձեր կարծիքով ԵՊՀ ԻՄ-ում ի՞նչ նոր մասնագիտության և/կամ մասնագիտացման կարիք կա:<br>.....<br>.....<br>..... |
| 19. | Որքանո՞վ են ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների մասնագիտական գիտելիքները մրցունակ աշխատանքի շուկայում:<br>.....<br>.....<br>..... |
| 20. | Աշխատանքի ընդունելիս հատկապես ի՞նչն եք կարևորում<br>.....<br>.....<br>..... |
| 21. | ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների մասնագիտական և մանկավարժական ի՞նչ որակներ կցանկանայիք փոխել .<br>.....<br>.....<br>..... |
| 22. | ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների ո՞ր առավելությունները կցանկանայիք ընդգծել.<br>.....<br>.....<br>..... |
| *23.* | ***<u>Ձեր առաջարկները</u>***<br>.....<br>.....<br>.....<br>.....<br>..... |

Ձեր կազմակերպությունում աշխատող ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների քանակը ____
Նրանցից քանի՞սն են աշխատում իրենց մասնագիտությամբ ____
Նրանցից քանի՞սն են աշխատանքի ընդունվել մրցույթով _____

**Շնորհակալություն հարցմանը մասնակցելու համար:**